



ՔՈՐՔՈՎԱՏՕ, ՌԻՕ ՏԸ ԺԱՆԵՐՈ

Ասիկա աշխարհի ամենն նշանաւոր վայրերն մէկն է եւ Պրագիլի խորհրդանիշը: Ինչպէս Փարիզը ունի իր Էյֆել աշտարակը, Ռիօ Տը Ժաներօ ունի իր Քորքովատօն եւ Յիսուսի արձանը:

Մարդիկ յաճախ կը շփոթեն Քորքովատոյին եւ Յիսուսի արձանին միջեւ: Քորքովատօն (փորթուկալերէն կը նշանակէ՝ «կուզը») այն գագաթն է, որուն վրայ շինուած է արձանը: Այս գագաթին բարձրութիւնը կը հասնի 710 մետրի եւ շրջապատուած է

Թիխուքայի անտառով: Գագաթը արձանին շինութենէն առաջ արդէն ծանօթ էր: Հոն ոչ միայն պրագիլցիները կ'երթային, այլ նաեւ աշխարհի չորս կողմերէն զբօսաշրջիկներ կու գային, որովհետեւ հոնկէ կ'երեւեր Ռիօ Տը Ժաներոյի ծովածոցին սքանչելի տեսարանը:

1829-ին հոն ճամբայ մը շինուած է, իսկ 1884-ին հաստատուած է շոգեկառք մը՝ մինչեւ գագաթ հասնելու համար: 1931-ին շինուած է Յիսուս Փրկիչին արձանը: Աւելի քան հարիւր տարիներու ընթացքին զբօսաշրջիկները հոն կ'երթային պարզապէս տեսարանին համար: Յիսուսի արձանը շինուած է հաւատացեալներուն համար, սակայն ժամանակի ընթացքին բոլոր զբօսաշրջիկները սկսած են հոն ուղղուիլ: Պէտք է յիշել նաեւ, որ անիկա աշխարհի այս տեսակի ամենն մեծ արձաններէն մէկն է:

Յիսուս Փրկիչին արձանը ունի երեսունութ մետր բարձրութիւն, իսկ անոր երկու բաց թելերուն միջեւ լայնքը կը հասնի քսանութ մետրի: Այս արձանին գաղափարը յղացած է ֆրանսացի Փոլ Լանտովսքի, իսկ երկու ճարտարապետներ՝ պրագիլցի Հէյթօր տա Սիլվա Քոսթա եւ ֆրանսացի Ալպեր Քաքէ գայն իրագործած են:

Այժմ Քորքովատօն եւ Յիսուս Փրկիչի արձանը Ռիոյի ամենն շատ այցելուած վայրերն են: 2007 թուականին արձանը ընտրուեցաւ իբրեւ արդի աշխարհի եօթը իրաշալիքներէն մէկը:



ԹԻՒԸ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵՆ-ՇԱՀԻՆԵՆ
ՆԿԱՐԱՍՈՐԵՑ՝ ՌԱՅՅԻ ԲԵՇՈՇԵՆ

ԵՐԵՔ ՄԿՆԻԿՆԵՐԸ

Ժամանակին երեք փոքրիկ մկնիկներ կային: Անոնք եղբայրներ էին եւ միասին կ'ապրէին գեղեցիկ պարտեզի մը մէջ: Սակայն ձմրան այդ փոքրիկ պարտեզը ամբողջովին ձիւնով ծածկուեցաւ:

Մկնիկները հաւաքուեցան, որպէսզի ձիւնը մաքրեն: Այդ ժամանակ կտոր մը խոզի իւղ գտան, որ սիսեռի հատիկին չափ էր: Անոնք իւղը իրենց կրտսեր եղբոր տուին եւ խնդրեցին, որ պահէ զայն: Կրտսեր եղբայրը չկրցաւ պահել իւղը, ընդհակառակն՝ կերաւ մինչեւ յատակը:

Մեծ եղբայրները խիստ վրդովեցան անկէ, յանդիմանեցին, լաւ մը ծեծեցին, ու քաշեցին տարին զայն դատարան:

Երբ դատարանին առջեւ կանգնեցան, մեծ մկնիկը ըսաւ.

- Մենք երեք եղբայրներ ենք, երեք մկնիկներ...

- Մեծ գերդաստան է,- ըսաւ դատարորը:

- Մենք ձեռքի ափին չափ հողի բաժին մը ունինք...

- Մեծ կարողութիւն է,մն ըսաւ դատարորը:

- Ձմրան մեր մօտ ձիւն եկաւ, մեր հողը ամբողջութեամբ ծածկուեցաւ...

- Ուրեմն աշխարհի ձիւնը ձեր գլխուն թափեր է,- ըսաւ դատարորը զարմացած:

- Մենք սկսանք ձիւնը մաքրել ու ...

- Օ՛, շատ ծանր աշխատանք է...,- ըսաւ դատարորը:

- Մենք կտոր մը խոզի իւղ գտանք, Համարեա՛ սիսեռի հատիկին չափ:

- Մեծ գանձ է,- բացագանչեց դատարորը:

- Մենք իւղը տուինք մեր կրտսեր եղբոր եւ խնդրեցինք, որ պահէ զայն...

- Էհ, ուր որ գանձ ըլլայ, այնտեղ պահակ պետք է ըլլայ,- հաստատեց դատարորը:

- Ան ալ իւղը առաւ, մինչեւ վերջ կերաւ...

- Վա՛յ քեզ մկնիկ,- բացագանչեց դատարորը կատղած:

- Մենք ալ լաւ մը ծեծեցինք զինք...

- Հը՛մ... Հը՛մ..... մրթմրթաց դատարորը,- եւ հիմա ի՞նչ կը պահանջէք:

- Ան պետք է ձիւնին տակէն նոյն մեծութեամբ կտոր մը խոզի իւղ գտնէ եւ բերէ մեզի:

- Ուրեմն, դուք ալ ձեր տուած ծեծը պետք է ետ քաշէք,- ըսաւ դատարորը եւ ծիծաղեցաւ:

Ան եղբայրներուն խորհուրդ տուաւ տուն վերադառնալ եւ հաշտ ապրիլ իրարու հետ...



ՁԵՌԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ
ԾԱՆՈՒԱԾ ՓԻՂԸ

Փիղը կ'ապրի Ափրիկեի ընդարձակ դաշտերուն մէջ: Անոնց կը հանդիպինք նաեւ Հնդկաստանի մէջ: Սակայն ինչպէ՞ս կրնանք զանազանել ափրիկեան փիղը՝ հնդկականէն: Ենորհիւ անոր մեծ ականջներուն:

ՊԵՏՔ ՈՒՆԻՄ

Գունաւոր բարակ խաւաքարտերու, քառանկիւն կտորներու, սեւ մատիտի, ներկի, մկրատի եւ խեժի

ԻՆՉՊԷ՞Ս ՍԿՍԻՄ

- 1.- Խաւաքարտէ քառանկիւնը երկուքի ծալէ՛:
- 2.- Մէկ կողմէն երիզ մը կտրէ՛ փիղին կնճիթին համար, ապա վարի բաժինին մէջտեղէն կէս կլոր մը կտրէ՛ ոտքերուն համար:
- 3.- Դուրս մնացած կէս կլորակները օգտագործէ՛ ականջներուն համար: Անոնց ծայրը ծալէ՛ եւ փակցո՛ւր գլխուն վրայ: Փիղին պոչը կտրէ՛:
- 4.- Պոչը ծալէ՛: Ոտքերուն ծայրերը դեպի դուրս ծալէ՛: Սեւ ներկով աչքերը գծէ՛:

